Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանի այցը Սյունյաց թեմ

1995 թ. Մարտի 11-13-ը Սյունյաց թեմ այցելեց Ամենայն Հայոց Կաթողիկոսական տեղապահ, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Թորգոմ Արքեպս. Մանուկյանը:

Եղեգնաձորի շրջանում Պատրիարք Հորը դիմավորեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Աբրահամ վրդ. Մկրտչյանը, շրջանի ղեկավար անձիք: Այնուհետև Նորավանքի վերականգնողական աշխատանքներին ծանոթանալուց հետո, Սրբազան Հայրը և նրան ուղեկցողները այցելեցին Եղեգնաձոր ավանում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին, ծանոթացան եկեղեցում կատարվող և կատարվելիք գործերին, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին եկեղեցու մոտ գտնվող բլրին կանգնեցված երկրաշարժի վոհերի հուշարձան-խաչքարին: Հուշարձան-խաչքարի հարևանության ներքո մայր հողին են հանձնված Արցախյան հերոսամարտում նահատակված մի քանի Եղեգնաձորցի ապատամարտիկներ: Այստեղ Պատրիարք Հայրը հոգեհանգստյան պաշտոն կատարելուց հետո ուղևորվեց Վայք, ուր տեղի շրջանային խորհրդի նախագահ պրն. Թովմասյանի հետ միասին շրջափեցին մի շարք հարցեր Վայքում կառուցվելիք Ս. Տրդատ եկեղեցու շինարարության խնդիրների շուրջ: Վայքից Պատրիարք Հայրը ճանապարհվեց Սիսիան, որտեղ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում դիմավորեցին շրջանի հոգևոր հովիվ Տեր Նարեկ քհն., քաղաքային իշխանության ներկայացուցիչները և հավատացյալների մեծ խումբ: Եկեղեցու երգչախմբում ընդգրկված 6 - 13 տարեկան երեխաների կատարմամբ հնչեցին մի շարք հոգևոր երգեր, որից հետո Պատրիարք Հայրը իր օրհնության խոսքն հղեց եկեղեցում հավաքված ժողովրդին, այնուհետև այցելեց վոհված ապատամարտիկների գերեզմանները, ուր կրկին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Սիսիանում Պատրիարք Հայրը այցելեց Որոտնավանք՝, երբեմնի Հայ դպրության խոշոր կենտրոններից մեկը:

Պատրիարք Հայրը եղավ նաև Տաթևում, ծանոթացավ վերականգնողական աշխատանքներին և հույս հայտնեց, որ մոտ ապագայում նման աշխատանքի շնորհիվ կարող ենք տեսնել վանքը վերանորոգված: Տաթևում օթևանելուց հետո, հաջորդ օրը Պատրիարք Հայրը այցելեց Գորիս, հանդիպեց քաղաքային իշխանության ներկայացուցիչներին, եղավ մի շարք կրթօջախներում, ծանոթացավ Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգման և գմբեթի կառուցման աշխատանքներին, այցելեց Սյունյաց թեմի առաջնորդարանում գտնվող նորաբաց Ս. Գրիգոր Լուսավորիչ բարեգործական ճաշարանը, որը գործում է ԱՄՆ-ի Հայ Առաքելական Եկեղեցու Արևելյան թեմի հովանավորությամբ: Առաջնորդարանում հանդիպում ունեցավ

digitised by A.R.A.R.@

կիրակնօրյա դպրոցի սաների, դասատուների, վերաստեղծ հոգևոր երգչախմբի հետ: Մարտի 12-ի կեսորին Պատրիարք Հայրը ճանապարհվեց Մեղրի: Անմոռանալի էր մեղրեցիների ոգևորությունը, քանզի նրանք չէին հիշում մի ժամանակ, երբ ապգի հոգևոր առաջնորդը այցելությանն արժանացրած լիներ Մեղրին: Մեղրիում Պատրիարք Հորը ծանոթացրին Մեծ և Փոքր թաղերի եկեղեցիների վերանորոգման աշխատանքներին, ինչպես նաև Արաքս գետի վրա կառուցվող Հայաստանը Պարսկաստանին կապող կամուրջի շինարարական գործերին:

Մեղրիից հետ ճանապարհվեցին Կապան՝, Սյունիքի ամենախոշոր քաղաքը, որտեղ Սրբական Հորը դիմավորեցին քաղաքային և շրջանային խորհուրդի իշխանության ներկայացուցիչները: Մարտի 13_ի առավոտյան Պատրիարք Հայրը եղավ Կապանի մշակույթի պալատում, որն պատերազմական գործողություններից բավականին տուժել էր, ծանոթացավ վերանորոգչական աշխատանքներին, այցելեց տրիկոտաժի ֆաբրիկաի հովանավորության ներքո գործող մանկապարտեզներից մեկը, որի սաները Սրբազանի այցելության կապակցությամբ տվեցին մի փոքրիկ համերգ:

Տրիկոտաժի ֆաբրիկայի տնօրենի հրավերքով տեղի ունեցավ հանդիպում ֆաբրիկայի աշխատավորության և Սրբական Հոր միջև, որի վերջում Պատրիարք Հայրը իր Հայրական օրհնությունը հղեց ներկաներին: Այնուհետև այցելեց Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցին ուր նրան դիմավորեց շրջանի հոգևոր հովիվ Տեր Եսայի քհն., ծանոթացավ եկեղեցում կատարվող որմնանկարչական աշխատանքներին:

Կապանից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադառնալու ճանապարհին Ամենապատվ Հայրը կանգ առավ Սյունյաց թեմի հովանավորության ներքո վերակառուցվող Ս. Վարդան ճամբարում:

Նույն օրը երեկոյան Ամենապատիվ Տեր Թորգոմ Արքեպս. Մանուկյանը վերադարձավ Մայր Աթոռ:

Այս ուղևորության ընթացքում Պատրիարք Հորը ընկերակցում էր ԱՄՆ Արևելյան թեմի ՀՕՖ-ի Երևանյան գրասենյակի տնօրեն Ռոյ Քելեքյանը:

digitised by A.R.A.R.@